ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 3. ՏԵՆԴԵՐՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 3

ԳԼՈՒԽ 4. ՏԵՆԴԵՐԻ ՀԱՅՏԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿՆ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 4

ԳԼՈՒԽ 5. ՏԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 6

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 7

ԳԼՈՒԽ 7. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Յունիբանկ>> ԲԲԸ-ի <<Մրցույթի անցկացման ընթացակարգը>> սահմանում է Յունիբանկի կողմից իր գործունեության անընդհատության ապահովման նպատակով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման մրցույթների հայտարարման, անցկացման և ամփոփման գործընթացները:

1.2 Բանկի գործունեության համար սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, այլ անհրաժեշտ գույքի ձեռքբերման, շինարարական, վերանորոգման աշխատանքների իրականացման համար սույն Ընթացակարգին համապատասխան, մատակարար կամ կապալառու ընկերությունների ընտրության նպատակով պարտադիր անցկացվում է փակ մրցույթ:

1.3 Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն՝

Ա) այն անձինք, որոնք անվճարունակ են, լուծարման գործընթացում սնանկ են ճանաչվել,

Բ) այն անձինք, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին ունեն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտքեր՝ հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարումների գծով:

1.4 Բանկի պաշտոնական կայքում տեղադրվում են տենդերային մրցույթին մասնակցելու համապատասխան պայմանները, մրցույթի անցկացման գործընթացի հետ կապված տեղեկատվությունը, ինչպես նաև սույն Ընթացակարգը:

1.5 Ըստ Հայտատուի պահանջի՝ մասնակցին անվճար տրամադրվում է սույն Ընթացակարգը:

1.6 Սույն Ընթացակարգի դրույթները չեն տարածվում Բանկի կողմից անկախ աուդիտորական ընկերության ընտրության նպատակով անցկացվող մրցույթների վրա, որը կարգավորվում է համաձայն Բանկի <<Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի>>:

1.7 Սույն Ընթացակարգը մշակվել է համաձայն ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Ընթացակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- ***Բանկ***՝ <<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերություն,
- ***Հանձնաժողով***՝ Տենդերային հանձնաժողով,
- ***Քարտուղար***՝ Հանձնաժողովի քարտուղար,
- ***Հայտատու***՝ տենդերային մրցույթի մասնակցության համար հայտ ներկայացրած և մրցույթին մասնակցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- ***Հրապարակային մրցույթի պայմաններ***՝ Բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթով կնքվող պայմանագրի էական պայմանների համալիր,
- ***Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն***՝ մրցույթի արդյունքների հիման վրա Բանկի և մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի միջև ստորագրված փաստաթուղթ, որի ստորագրման պահից մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը ձեռք է բերում

համապատասխան պայմանագիր կնքելու իրավունք կամ ստանձնում է պայմանագիր կնքելու պարտավորություն,

- ***Մրցույթի հայտերի ամփոփման նիստ՝*** մրցույթի հաղթողին որոշելու համար գումարվող Հանձնաժողովի նիստ, որի ընթացքում Հանձնաժողովը քվեարկության միջոցով ձևավորված եզրակացության հիման վրա որոշում է կայացնում ստորագրել մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը կամ որոշում է կայացնում մրցույթը չկայացած համարելու մասին:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՆԴԵՐՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Տենդերային մրցույթի պայմաններն իրենց մեջ ներառում են՝

Ա) մրցույթի կազմակերպչի անվանումը,

Բ) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն),

Գ) մրցույթի պայմանները (կնքվելիք պայմանագիրը),

Դ) մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի,

Ե) մրցույթի ձևը և անցկացման կարգը (մրցութային հայտերին ներկայացվող պահանջները, դրանց ներկայացման կարգը, մրցութային հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու կարգը),

Զ) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը,

Է) մրցույթում հաղթողին որոշելու կարգը,

Ը) մրցույթի ծածկագիրը և դրա կիրառման կարգը,

Թ) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը,

Ժ) համապատասխան պայմանագրի կնքման համար տրամադրվող ժամկետը,

Ի) մրցույթի Ընթացակարգին ծանոթանալու վայրը և Ընթացակարգի պատճենը տրամադրելու կարգը,

Լ) սույն Ընթացակարգով նախատեսված, ինչպես նաև Հանձնաժողովի հայեցողությամբ՝ այլ տեղեկություններ:

Մրցույթի վերաբերյալ ծանուցումը պարունակում է նաև հետևյալ տեղեկությունները՝

Ա) մրցույթի առարկայի գինը և վերջինիս հաշվարկման մեթոդը,

Բ) ձեռքբերումների այն ժամանակահատվածը, որի համար հայտարարվել է մրցույթը:

3.2. Մրցույթն անցկացվում է առնվազն 3 (երեք) ընկերությունների կողմից առաջարկ ներկայացվելու դեպքում: 3 (երեք) մասնակցից քիչ լինելու դեպքում մրցույթի հայտեր ընդունելու ժամկետը երկարաձգվում է մեկից երկու շաբաթով, որի մասին հայտարարություն է տեղադրվում նաև Բանկի պաշտոնական կայքում, և անկախ մասնակիցների քանակից մրցույթն անցկացվում է սահմանված ժամկետի ավարտին:

3.3. Բանկը երաշխավորում է մրցույթի բոլոր մասնակիցների հնարավորությունների հավասարությունը:

3.4. Բանկի աշխատակիցների հետ փոխկապակցված ընկերությունները Բանկի հայտարարած մրցույթին կարող են մասնակցել միայն Բանկի համաձայնությամբ, ընդ որում բացի փոխկապակցված ընկերություններից աճուրդին պետք է մասնակցեն նաև առնվազն 2 (երկու) այլ՝ Բանկի աշխատակիցների հետ չփոխկապակցված, կազմակերպություն: Եթե մրցույթին հաղթող է

ճանաչվում Բանկի աշխատակիցների հետ փոխկապակցված կազմակերպությունը և առկա է շահերի բախում, ապա հարցը պետք է քննարկվի նախ Բանկի Վարչության կողմից և վերջինիս եզրակացությամբ ներկայացվի Բանկի Խորհրդի դիտարկմանը, որտեղ էլ պետք է որոշվեն մրցույթի արդյունքները ճանաչելու կամ նոր մրցույթ հայտարարելու հարցը:

3.5. Լավագույն առաջարկը որոշվում է՝ հաշվի առնելով գնառաջարկները: Հայտատուն պետք է հստակ կերպով ներկայացնի կիրառվող զեղչերը և երաշխիքային սպասարկման պայմանները: Այլ հավասար պայմանների դեպքում, այդ թվում հավասար գնառաջարկի դեպքում, նախապատվությունը տրվում է երաշխիքային սպասարկման և մատակարարման լավագույն պայմաններ առաջարկող հայտատուին:

3.6. Տենդերային մրցույթի առարկան՝ համապատասխան պայմանագիրը, Բանկը և մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը պետք է ստորագրեն մրցույթի ավարտից և արձանագրության ձևակերպումից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, եթե հրապարակային ծանուցման մեջ կամ կողմերի համաձայնությամբ այլ ժամկետ սահմանված չէ:

3.7. Տենդերային հանձնաժողովը մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել նախատեսված մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը՝ դրա մասին ծանուցելով մասնակիցներին, այդ թվում Բանկի պաշտոնական կայքում հրապարակելու միջոցով: Այդ կապակցությամբ Բանկը պարտավոր է մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կատարել համապատասխան փոփոխություններ և/կամ լրացումներ: Նշված փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը: Բանկը հրապարակային ծանուցման փոփոխությունների դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած իրական վնասների ռիսկը:

3.8. Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4.1 Տենդերային մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան Բանկ են ներկայացնում մրցույթի հայտերը:

4.2 Մրցույթի հայտերը ներառում են հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը՝

- մրցույթի մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարները, իրավաբանական անձի դեպքում՝ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից տրված գրանցման վկայականի պատճենը,
- սարքավորումների և/կամ ծրագրային ապահովման նկարագրությունը, մատակարարման ժամկետները,
- տեղեկություններ նախկինում նման ոլորտում այլ կազմակերպությունների հետ (տեղական, միջազգային, օտարերկրյա) համագործակցելու մասին, տեղեկություններ նախորդ հաշվետու

տարվա ընթացքում իր կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման ծավալի վերաբերյալ,

- լիցենզիայի ռեկվիզիտները՝առկայության դեպքում,
- տեղեկանքներ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից և կենսաթոշակային հիմնադրամից՝ գործունեության վերջին ժամանակահատվածում և տվյալ պահին կազմակերպության՝ պետբյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ (ըստ պահանջի),
- համապատասխան աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության և վիճակի մասին տեղեկատվություն,
- ձեռք բերվող գույքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների նմուշները՝ դրանց որակը տեղում ստուգելու նպատակով, որոնք կհաստատեն իր կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվելիք ծառայությունների որակը,
- մրցույթի կազմակերպչի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

4.3 Հայտատուները մինչև հայտերի բացման օրը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց):

4.4 Ծրարներին, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետներին, ինչպես նաև մրցույթի հայտերով ներկայացման ենթակա տեղեկություններին և փաստաթղթերին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հայտերը, այդ թվում թերի ներկայացված փաթեթները, մրցութային հանձնաժողովի կողմից մերժվում են և վերադարձվում ներկայացնողին:

4.5 Բանկը պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցույթի նախապատրաստման և ուղարկման համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:

4.6 Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով: Ծրարի դիմերեսին պետք է առկա լինեն սույն Ընթացակարգին կից գործող Հավելված 1-ով սահմանված տվյալները՝ սահմանված ձևաչափով՝ լրացված հայտ ներկայացնողի կողմից[1]:

4.7 Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և 1 (մեկ) կրկնօրինակից (կազմակերպության ֆիրմային ձևաթղթերի վրա (առկայության դեպքում), ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից և կնքված կազմակերպության կնիքով (առկայության դեպքում)), որոնց վրա համապատասխանաբար գրվում են “բնօրինակ” և “կրկնօրինակ” բառերը:

4.8 Հայտատուները պետք է ապահովեն իրենց գնառաջարկների առաքումը Բանկ (իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Չարենցի 12 թիվ 53, 1-5)՝ մինչև սահմանված վերջնաժակետը:

4.9 Բանկը դադարեցնում է գնառաջարկների ընդունումը Հանձնաժողովի կողմից սահմանված վերջնաժամկետին: Վերջնաժամկետից ուշ ստացած գնառաջարկները մերժվում են Բանկի կողմից՝ առանց հաշվի առնելու դրանց բովանդակությունը: Այդ դեպքում հայտատուն իրավունք ունի հետ կանչել իր տենդերային առաջարկը:

[1] Ծրարի վրա նշված “Հայտի ընդունման ամսաթիվ և ժամ” դաշտը լրացնում է ծրարը ընդունող Բանկի աշխատակիցը:

4.10 Բանկը ծրարն առաքող անձին, ըստ պահանջի, առձեռն տրամադրում է Ստացական տենդերային առաջարկը ընդունելու վերաբերյալ՝ նշելով ստացման ժամը և օրը:

4.11 Հանձնաժողովը որոշում է կայացնում լրացուցիչ փուլերի անցկացման մասին կամ լավագույն առաջարկ կատարած (հիմնվելով գնային, որակի չափանիշների վրա) հայտատուի որոշման և Պայմանագրի կնքման մասին:

4.12 Բանկը պատասխանատվություն չի կրում տենդերային առաջարկների կորստի կամ ծրարի՝ նախատեսված տենդերի անցկացումից շուտ բացման համար, եթե տենդերային առաջարկով ծրարը չի կնքվել կամ չի համապատասխանում Բանկի կողմից առաջադրված պահանջներին:

4.13 Հանձնաժողովը չկայացած (անվավեր) է համարում մրցույթը, եթե՝

- ոչ մի հայտ չի ներկայացվել,
- ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին,
- արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը, գույքի ձեռք բերումը կամ ծառայությունների մատուցումը:

4.14 Մրցույթում կարող են հաղթող ճանաչվել մեկից ավելի կազմակերպություններ՝ հաշվի առնելով մատակարարվող ապրանքի տեսականին և այլ հանգամանքներ:

4.15 Մրցույթի մասնակիցների հայտերը մինչև Հանձնաժողովի նիստը պահվում են Հանձնաժողովի քարտուղարի մոտ, ով պատասխանատու է դրանց պահպանության համար:

4.16 Հանձնաժողովի նիստում հայտերը հանձնվում են Հանձնաժողովի նախագահին կամ նախագահողին:

ԳԼՈՒԽ 5. ՏԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5.1 Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների երկու երրորդը. Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի քարտուղարը և Հանձնաժողովի առնվազն 3 (երեք) անդամ:

5.2 Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի 1 (մեկ) ձայնի իրավունք: “Կողմ” և “Դեմ” ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:

5.3 Որոշումը ձևակերպվում է Քարտուղարի կողմից կազմված արձանագրությամբ, որը մրցույթի նիստից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պետք է ստորագրվի նիստին ներկա Հանձնաժողովի բոլոր անդամների և հաստատվի Հանձնաժողովի նախագահի կողմից:

5.4 Հանձնաժողովն իրավունք ունի մերժել հայտը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով տվել է, պայմանավորվել է տալ կամ առաջարկել է Հանձնաժողովի որևէ աշխատակցի ցանկացած տեսակի պարգևատրում՝ աշխատանք, ծառայություն, ցանկացած արժեքավոր իր որպես խրախուսում, որը կարող է ազդել լավագույն առաջարկ կատարած Հայտատուի ընտրման կապակցությամբ որոշումների կայացման վրա:

5.5 Հանձնաժողովն իրավունք ունի մրցույթի անցկացմանն առնչվող գործընթացները կասեցնել մրցույթի փակման օրվանից առնվազն 3 (երեք) օր առաջ՝ այդ մասին համապատասխանաբար ծանուցելով հայտատուներին Բանկի պաշտոնական կայքում այդ տեղեկատվությունը տեղադրելու միջոցով: Բանկը պատասխանատվություն չի կրում այսպիսի կասեցման արդյունքում հայտատուների կամ երրորդ անձանց կողմից կրած ծախսերի համար:

5.6 Տենդերային հանձնաժողովի անդամները և Քարտուղարը պարտավոր են Հանձնաժողովի ողջ գործունեության ընթացքում պահպանել իրենց հայտնի դարձած՝ Հայտերով ներկայացված տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված	Անվանում
Հավելված 1	Ծրարի դիմերեսի ձևաթուղթ

ԳԼՈՒԽ 7. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագրման համար	Խմբագրման ամսաթիվ և որոշում	Խմբագրման նկարագրություն
1	Վարչության 11.04.2019թ որոշմամբ	-